Doi:10.54503/0135-0536-2022.1-26

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ. ՀԱՅ ԱՌԱՋԻՆ ԽՈՇՈՐ ՋՈՒԹԱԿԱՀԱՐԸ*

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Հովհաննես Նալբանդյան, արտիստ, ջութակահար-վիրտուոզ, մանկավարժ, Պետերբուրգի կոնսերվատորիա, հուշագրություն, Պ. Սարասատե, Լ. Աուեր:

Նախաբան

«Ես մեծ հաճույքով լսեցի Լեոպոլդ Աուերի շատ հայտնի ուսանող Հովհաննես Ռոմանովիչ Նալբանդյանին, որը ջութակահարի մեծ տաղանդ ունի»[1]. ահավասիկ աշխարհահռչակ ջութակահար Պաբլո դե Սարասատեի կարծիքը Պետերբուրգի կոնսերվատորիայի շրջանավարտ, տակավին 24-ամյա հայ տաղանդավոր ջութակահար, ՌՍՖՍՀ վաստակավոր արտիստ (1926), ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1937) Հովհաննես Առաքելի (Ռոմանի) Նալբանդյանի (15 սեպտեմբերի 1871, Սիմֆերոպոլ – 23 փետրվարի 1942, Տաշքենդ) մասին Լոնդոնում 1895 թ. տեղի ունեցած նրանց հանդիպումից հետո: Հիացած երիտասարդ ջութակահարի նվագով՝ իր փառքի գագաթին գտնվող Սարասատեն, տեղեկանալով, որ Նալբանդյանն աշնանը մտադիր է վերադառնալ Պետերբուրգ, նրան խորհուրդ է տալիս մնալ արտասահմանում և համերգներով հանդես գալ. իհարկե, սկզբնական շրջանում դա դժվար կլինի, սակայն հետո՝ ամեն ինչ լավ կընթանա: «Սարասատեի այս խոսքերը հետագայում ես շատ անգամ եմ հիշել իմ կյանքում, – տարիներ անց կգրի Նալբանդյանը, – և շատ ափսոսում էի, որ չհետևեցի նրա խորհրդին»[2]:

Նալբանդյանը վերադարձավ Պետերբուրգ, որը դարձավ նրա երկրորդ հայրենիքը: Այստեղ նա ծավալեց ակտիվ համերգային և մանկավարժական գործունեություն՝ 47 տարի լինելով Պետերբուրգի կոնսերվատորիայի պրոֆեսոր: Հենց այստեղ Նալբանդյանը հետագայում առիթներ ունեցավ կրկին

** Ներկայացվել է 21. II. 2022 թ., գրախոսվել է 01. III. 2022 թ., ընդունվել է տպագրության 10. III. 2022 թ.:*

[1] ՀՀ գրականության և արվեստի թանգարան (այսուհետ՝ ԳԱԹ), Հովհ. Նալբանդյանի ֆ., № 350:

[2] ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 2:

հանդիպելու Սարասատեի հետ՝ Ռուսաստանում նրա հյուրախաղերի ընթացքում: Այդ հանդիպումների տպավորությունների տակ ծնվեց Նալբանդյանի հուշագրությունը Սարասատեի մասին, որը հեղինակն ավարտեց Լենինգրադում մահից ընդամենը ամիսներ առաջ, ինչպես նշված է ձեռագրում՝ «2–4–41»[3]:

Սիմֆերոպոլ. մանկության և պատանեկության տարիները

Հովհ. Նալբանդյանը ծնվել է երաժշտասերների ընտանիքում, և նրա մանկական բոլոր վառ տպավորությունները կապված էին երաժշտության հետ. «Հայրս հայ գրող էր: Ծնողներս երաժշտություն էին սիրում: Հայրս ֆլեյտա էր նվագում, իսկ մայրս՝ ռոյալ»[4]:

Դեռևս մանկությունից նրա մեջ տպավորվեցին մոր՝ Աննա Նալբանդյանի օրորոցային երգերը, որոնք նա երգում էր՝ քնեցնելով երեխային: «Թեև ես արդեն 4–5 տարեկան էի, – հետագայում կգրի երաժիշտն իր ինքնակենսագրության մեջ, – սակայն առանց այդ երգերի ես հազվադեպ էի քնում և դրանք միշտ ինձ վրա ազդում էին իրենց թախծոտ, լիակատար անելանելության մոտիվով»[5]: Իսկ երբ երեկոյան՝ գործերից հետո, հայրը նվագում էր ֆլեյտա, փոքրիկը սուսուփուս գնում էր այդ սենյակը և ունկնդրում հոր նվագը: Սիրում էր նաև մոր նվագը ռոյալի վրա, որի հնչյունները միշտ գերում էին նրան:

Հայրը՝ Առաքել (Ռոման) Նալբանդյանը, «շատ տաղանդավոր մարդ էր, հասարակական գործչի նատուրայով այնքան հեռու էր առևտրական գործերից, որոնք ճակատագիրը նախանշել էր որպես իր զբաղմունք, նա ամենևին պատրաստված չէր դրան:

Լինելով հայ-կաթոլիկ ծխական եկեղեցու հոգաբարձու, հայրս խանդով էր վերաբերվում և մեր համայնքի գործերին: Նրա բաղձալի երազանքն էր երկու հայկական համայնքների՝ գրիգորյանական և կաթոլիկ, միավորումն ու նրանց միջև գոյություն ունեցող անբարյացակամության վերացումը: Այդ գաղափարին էր նա նվիրում իր լավագույն ուժերն ու եռանդը: Հայրս ներշնչում էր մեր հասարակությանը, որ մենք հայեր ենք, այլ ոչ թե կաթոլիկներ, որ կրոնը ոչ մի կապ չունի ազգության հետ և որ և՛ գրիգորյանականը, և՛ կաթոլիկը, և՛ բողոքականը, բոլորը միայն հայեր են, նրանք ունեն նույն արյունը, նույն հոգին ու նույն սիրտը: Եվ եթե հորս այդ հայացքները չընդունվեցին մեր հասարակության կողմից, ապա մեր՝ նրա զավակների, դաստիարակության համար հսկայական նշանակություն ունեցան. մանկուց այդ հարցերի նկատմամբ մենք ունեինք սթափ և ճիշտ հայացքներ»[6]:

Ինը տարեկանում Հովհ. Նալբանդյանը սկսում է հաճախել հայկական կաթոլիկ դպրոց. սովորում էր վատ, սակայն շատ էր սիրում երգչախմբային

---

[3] *Պ. Սարասատեի մասին Հովհ. Նալբանդյանի արժեքավոր հուշագրությունը, որի ձեռագիրը գտնվում է ԳԱԹ-ի նրա արխիվում, մեր ջանքերով հատվածաբար հրապարակվեց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական պարբերականի՝ «Արվեստագիտական հանդեսի» անդրանիկ համարում. տե՛ս Ա ս ա տ ր յ ա ն. 2019, 188–206:*

[4] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (դ):*

[5] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913, էջ 1:*

[6] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913, էջ 5:*

երգեցողության դասերը, և, մասնավորապես՝ կիրակի օրերին եկեղեցում երգել երգեհոնի նվագակցությամբ: Ջութակ նվագել Նալբանդյանը սկսում է պատահաբար: Ինչպես հայտնի է, 1879 թ. տեղի ունեցան Պետերբուրգի կոնսերվատորիայի ջութակի դասարանի առաջին պրոֆեսոր, «ջութակի Շոպեն» Հենրիկ Վենյավսկու հյուրախաղերը Ռուսաստանում, որոնք դարձան նրա համերգային գործունեության վերջին ակորդը: Իր հյուրախաղերի ընթացքում նա այցելում է նաև Սիմֆերոպոլ:

Համերգը ճակատագրական է դառնում Հովհ. Նալբանդյանի կյանքում: Այդ համերգին ներկա Նալբանդյանի մայրը՝ հիացած Վենյավսկու նվագով, սիրահարվում է ջութակին և որոշում, որ իր ավագ որդին պիտի ջութակ նվագի: Մոր խոսքերով՝ ջութակահարն իր նվագով այնպես էր հափշտակում ունկնդիրներին, որ իր «Լեգենդի» կատարման ժամանակ նրանցից շատերն արտասվում էին, և, երբ Վենյավսկին նվագում էր իր պոլոնեզներն ու մազուրկաները, առաջ էր բերում հիացմունքի փոթորիկ. «Վենյավսկուն ես համարում էի ջութակահար-արտիստի իդեալ»[7]: Ի դեպ, Սարասատեի մասին իր հուշագրության մեջ հետագայում Նալբանդյանը կգրի, որ «առաջին ականավոր ջութակահարները, ում անունները ես լսել եմ իմ մանկական տարիներին, Պագանինին էր ու Վենյավսկին»[8]:

Այդ ժամանակ Հովհ. Նալբանդյանը տասը տարեկան էր: Նրա համար գնում են ջութակ, և որդու հետ պարապելու նպատակով հայրը հրավիրում է իր ընկերոջը՝ սիրող-ջութակահար Մալյանին. «Ես շատ սիրեցի ջութակն ու իմ ուսուցչին և ջերմեռանդորեն պարապում էի և մի քանի ամսվա ընթացքում, Մալյանի խոսքերով, այնքան առաջադիմեցի, որ նա խնդրեց մեկ այլ, ավելի տեղյակ ուսուցիչ գտնել: Մենք փոխեցինք մի քանի ուսուցիչների, մինչև որ գտանք տաղանդավոր ջութակահար Ֆիերկովսկուն»[9]: Նրանց պարապմունքներն օրիգինալ էին. ուսուցիչը գրեթե ոչինչ չէր հարցնում Նալբանդյանին, այլ ամբողջ ժամանակ նվագում էր ինքը, իսկ աշակերտը բավականությամբ ունկնդրում էր նրան և նմանակելով՝ ձգտում փոխառել այն, ինչ կարող էր ...

Նալբանդյանի հրապարակային անդրանիկ ելույթը Սիմֆերոպոլում տեղի է ունենում բարեգործական համերգի ժամանակ՝ տասնմեկ տարեկանում և անցնում մեծ հաջողությամբ: Հաջորդում են ևս մի քանի ելույթները Սիմֆերոպոլում, իսկ ամռանը նա մեկնում է Թեոդոսիա. «Թեոդոսիայում շուտով տեղեկացան, որ ես ջութակ եմ նվագում և հրավիրեցին մասնակցել բարեգործական համերգին, որտեղ մեծ հաջողություն ունեցա: Այդ համերգին ներկա էր Այվազովսկին»[10]: Տեղի է ունենում նրանց հանդիպումը, և իր կյանքում առաջին անգամ պատանի ջութակահարը տեսնում է կտավներ. դրանք Այվազովսկու կտավներն էին Թեոդոսիայի նրա պատկերասրահում:

1883-ին Հովհ. Նալբանդյանի մայրը՝ բուժվելու նպատակով, մեկնում է Խարկով: Այնտեղից վերադառնալով՝ իր հետ բերում է Պաբլո դե Սարասատեի լուսանկարն ու համերգի հայտագիրը: Որդու հարցին, թե ինչպե՞ս է նվագում Սարասատեն և արդյո՞ք նրա նվագը նման է Վենյավսկու նվագին, թե՞

---

[7] *Ասատրյան. 2015, 101:*
[8] *Ասատրյան. 2015, 101:*
[9] *ԳԱԹ, Հովհ Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 2:*
[10] *ԳԱԹ, Հովհ Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 2:*

նրա նվագում կա ինչ-որ արտասովոր, դիվային բան, ինչպես Պագանինիի նվագում, մայրը պատասխանում է. «Ոչ, նա չի նվագում Վենյավսկու նման: Սարասատեի նվագի մեջ կան ինչ-որ երկնային, զարմանալիորեն գեղեցիկ, թեթև հնչյուններ, որոնք, ասես, հրեշտակային երգեցողություն լինեն: Իսկ Սարասատեն նվագում է, ասես, ոչ թե ջութակ, այլ ինչ-որ անհայտ գործիք»[11]: Ամեն անգամ՝ Սարասատեի մասին մոր պատմությունները լսելուց հետո, փոքրիկն ատիճանաբար «նեղանում էր ջութակահարից՝ ջութակի փոխարեն». «Ես՝ տասնմեկամյա տղաս, պաշտում էի իմ ջութակն ու այն համարում աշխարհի լավագույն գործիքը»[12]:

Հովհ. Նալբանդյանի կյանքում հաջորդ բախտորոշ իրադարձությունը տեղի է ունենում 1885-ին: Համերգներով հանդես է գալիս ռուս թավջութակահար, Պետերբուրգի կոնսերվատորիայի նախկին շրջանավարտ, իսկ 1885-ից՝ նույն կոնսերվատորիայի պրոֆեսոր Ալեքսանդր Վերժբիլովիչը. «Սա առաջին մեծ արտիստն էր, ում ես լսել եմ: Տպավորությունը հսկայական էր»: Նալբանդյանին ցույց են տալիս Վերժբիլովիչին. նա նվագում է: Վերժբիլովիչը մեծ ապագա է գուշակում և համոզում Նալբանդյանի հորը, որպեսզի տղային ուղարկի Պետերբուրգ՝ սովորելու:

Պետերբուրգ. ուսումնառությունը կոնսերվատորիայում

1886-ի օգոստոսի վերջին Նալբանդյանը հոր հետ արդեն Պետերբուրգում էին: «Պետերբուրգում մենք ոչ ոքի չէինք ճանաչում: Հորս մոտ միտք հղացավ՝ ծանոթացնել ինձ հայկական-գրիգորյանական եկեղեցու հոգևորական Օ. Խանտարջյանի հետ: Մենք գնացինք նրա մոտ, նա մեզ ընդունեց սիրալիր, ջերմ և խորհուրդ տվեց տեղավորվել հայկական եկեղեցու տանը, որտեղ բակում, բնակարաններից մեկում մի սենյակ վարձով էր տրվում: Հենց այդ նույն օրը ես տեղափոխվեցի նոր բնակարան»[13],– հիշում է պատանի ջութակահարը: Մեկնելուց առաջ հայրը որդուն տանում է հայկական եկեղեցի և ասում. «Ահա՛ քո եկեղեցին, ե՛կ այստեղ և եղի՛ր հայ»[14]:

Նալբանդյանը քննություն է հանձնում և գրանցվում կոնսերվատորիայի ավագ դասախոս, ռուս ջութակահար, դիրիժոր և մանկավարժ Նիկոլայ Գալկինի դասարանում: 1886–1887 ուսումնական տարեվերջի բնութագրում Ն. Գալկինը գրում է. «Մեծ տաղանդ է, դրա հետ մեկտեղ՝ սիրում է աշխատել: Տարվա ընթացքում փայլուն առաջադիմություն է ցույց տվել: Կարելի է հուսալ, որ նրան շատ լավ ապագա է սպասում»[15]: Իսկ մեկ տարի անց Գալկինը բնութագրում նշում է. «... խոշոր, աչքի ընկնող տաղանդ է, հիանալի և լուրջ վերաբերմունք ունի դեպի արվեստը»[16]:

1887-ի գարնանը տաղանդավոր երաժիշտը պատրաստվում է ավարտական քննության, որից կախված էր նրա ողջ ապագան: Հոր գործերը վատացել էին, և նա այլևս չէր կարող վճարել կոնսերվատորիայում սովորելու հա-

[11] Ասատրյան. 2015, 102:
[12] Ասատրյան. 2015, 103:
[13] ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 3:
[14] ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 3:
[15] Գևորգյան. 1962, 17:
[16] Գևորգյան. 1962, 18:

մար որդու ուսման վարձը: Գալիս է քննության օրը. «Ես սարսափելի հուզվում էի, բայց երբ բեմ դուրս եկա, տեսա սփռոցով ծածկված սեղանն ու կենտրոնում Ռուբինշտեյնի (կոնսերվատորիայի դիրեկտորը – Ա. Ա.) հզոր, առյուծային, ուժով և վեհագեղությամբ լի մեծ գլուխը, և ասես թռա անդունդը, բայց կամքի սարսափելի ուժով ինձ հավաքեցի և սկսեցի նվագել: Ամեն ինչ, ասես, երազում լիներ: Ինձ այդ վիճակից հանկարծ արթնացրեց ձայնը. «Բռավո, բռավո», – դա Ռուբինշտեյնի ձայնն էր»[17]:

Բեմից իջնում է Նալբանդյանը, և նրան շրջապատում է ուսանողների բազմությունը՝ շնորհավորանքներով, մոտենում է դասախոսը և արցունքն աչքերին գրկում, ապա՝ պրոֆեսոր Լ. Աուերը մեկնում է ձեռքն ու շնորհավորում: Այդ ամենից հետո հայտարարում են, որ դիրեկտորը պատանի ջութակահարին դարձրել է կրթաթոշակառու և բացի այդ՝ նշանակել ամսական 10 ռուբլի աջակցություն: «Ես այնքան ուրախ էի այդ օրն իմ հանդեպ Ռուբինշտեյնի ցուցաբերած մեծ ուշադրության համար, որ նա ինձ առանձնացրեց քննություն հանձնող ուսանողների մեջ և հնարավորություն տվեց շարունակելու իմ երաժշտական կրթությունը Կոնսերվատորիայում: Այդ օրվանից ես տեղ գրավեցի մեր Կոնսերվատորիայի լավագույն ուսանողների շարքում»[18]:

Այսպես՝ Ն. Գալկինի մոտ ուսումնառության երկու տարիներին Հովհ. Նալբանդյանն աճում է անճանաչելիորեն՝ իր վրա հրավիրելով կոնսերվատորիայի դիրեկտոր Ա. Ռուբինշտեյնի և պրոֆեսոր Լ. Աուերի ուշադրությունը: Իր փայլուն հաջողությունների համար 1888 թ. Նալբանդյանը տեղափոխվում է վիրտուոզ-ջութակահար, խոշոր մանկավարժ, դիրիժոր Լ. Աուերի դասարան:

Դեռևս ուսանողական տարիներին Աուերը միշտ զարմանալի լավ էր վերաբերվում Նալբանդյանին. մեծ ուշադրությամբ ու հոգատարությամբ նա զգում էր այն պահերը, երբ Նալբանդյանը հոգեպես ընկճվում էր և նրա համար շատ ծանր էր, ու ամեն կերպ աջակցում էր: Հաճախ հրավիրում էր իր տուն. նրա ընտանիքը Նալբանդյանին սիրում էր: Իսկ երբ արդեն վերջինս Պետերբուրգի կոնսերվատորիայի դասախոս էր ու նրա օգնականը, պրոֆեսորի և նրա սանի միջև գոյություն ունեցող սահմանը վերացավ, ու նրանք դարձան մեծ բարեկամներ: «Ես պիտի այդ բոլոր տարիների ընթացքում, 17 տարիների ընթացքում, շաբաթը երկու անգամ ճաշեի նրա մոտ, իսկ հետո երեկոները մենք նվիրում էինք երաժշտության մասին զրույցներին: Հաճախ և գրեթե միշտ ինձ հաջողվում էր խնդրել նրան ջութակ նվագել և լսելով նրան, հանգիստ նստած խաղաղ իրադրության մեջ ես շատ բան սովորեցի այդ խոշոր ջութակահար-արվեստագետից և նրանով, որ ինձ հնարավորություն ընձեռեց, որպես իր օգնականի, պարապել իր դասարանում, նա ինձ հսկայական օգուտ տվեց, սովորեցնելով ուրիշներին՝ ես շատ բան սովորեցի: Ե՛վ որպես արտիստ, և՛ որպես պրոֆեսոր-մանկավարժ և շատ բանով եմ պարտական Աուերին, և իմ ուսուցչի հանդեպ ջերմ երախտագիտությունը միշտ կապրի իմ մեջ»[19], – հետագայում կլոստովանի Նալբանդյանը:

---

[17] ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 3:
[18] ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 4:
[19] ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 16:

Հովհ. Նալբանդյանի արխիվում են գտնվում իր դասախոսի՝ իրեն հասցեագրված ռուսերեն ու գերմաներեն նամակներն ու բացիկները, որոնք ուղարկվել են 1897-ից մինչև 1923 թվականը Կիևից, Փարիզից, Յալթայից, Մյունխենից, Դյուսելդորֆից, Քյոնիգսբերգից, Բեռլինից, Լոնդոնից, Դրեզդենից, Նյու-Յորքից ...[20]

Նալբանդյանն Աուերի ամենասիրելի սանն էր ու օգնականը[21]*: Որպես օգնական՝ Նալբանդյանն Աուերի դասարանի համար նախապատրաստեց ամերիկյան ջութակահար Միշա Էլմանին, ամերիկյան ջութակահար, կոմպոզիտոր և մանկավարժ Եֆրեմ Զիմբալիստին, Պետերբուրգի կոնսերվատորիայի առաջին արտասահմանցի սան, հետագայում կանադացի ջութակահար Կեռլին Պարլոուին, ամերիկյան ջութակահար, կոմպոզիտոր ու մանկավարժ Իոսիֆ Ախրոնին և այլոց: Իսկ 1903-ից Հովհ. Նալբանդյանի դասարանում են իրենց ուսումնառությունը սկսել ամերիկյան ջութակահար, մանկավարժ, XX դ. խոշորագույն ջութակահարներից մեկը՝ Յաշա Հայֆեցը, Մ. Պիաստրոն: Մեծն ջութակահարի սաներից անհրաժեշտ է հիշատակել նաև Ա. Պրանգին և Տ. Շվարցին, ովքեր կոնսերվատորիան ավարտեցին Ա. Ռուբինշտեյնի մրցանակով:*

Նկատենք, որ հենց Նալբանդյանի միջոցով հետագայում նշանակալիորեն իրականացավ աուերյան դպրոցի և սովետական ջութակի դպրոցի միջև կապը: Նալբանդյանի՝ սովետական շրջանի ուսանողներից հիշատակության են արժանի ջութակահար, մանկավարժ, ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Իլյա Լուվաշևսկին (հետագայում իր իսկ ստեղծած՝ Ա. Կ. Գլազունովի անվան հանրահայտ կվարտետի ղեկավար), ջութակահար, մանկավարժ, Կիևի կոնսերվատորիայի պրոֆեսոր Յակով Մագազինները, Լենինգրադի Ս. Մ. Կիրովի անվան թատրոնի նվագախմբի կոնցերտմայստեր Ե. Մ. Խանտան, Լենինգրադի ֆիլհարմոնիայի կոնցերտմայստեր Ի. Ա. Շպիլբերգը:

Ջութակահարի ընորոշմամբ՝ 1889 թ. անցնում է անհետաքրքիր: Նալբանդյանը եռանդուն պարապում է, միաժամանակ զբաղվում ընթերցանությամբ, հատկապես հրապուրվում Տոլստոյի, Տուրգենևի, Գոգոլի և Դոստոևսկու ստեղծագործություններով: Գարնանը Նալբանդյանը տուն է մեկնում սովորականից շուտ. հիվանդության պատճառով չէր հանձնել ջութակից քննությունը. «Ինչպիսի ուրախությամբ ես մեկնեցի տուն և ինչքան երջանիկ էի առաջին օրերին՝ ջերմորեն սիրող ընտանիքում: Յավոք, այդ երջանիկ տրամադրությունը շուտով իր տեղը զիջեց ճնշող զգացումին, ինչը հորս առևտրական գործերի մասին տխուր պատմությունների հետևանք էր»[22]*:*

1889-ին Սիմֆերոպոլում հյուրախաղերով հանդես է գալիս Պետրոս Ադամյանը, ում խաղով Հովհ. Նալբանդյանը հիանում է. «Նա թողեց հսկայական տպավորություն՝ իր տեմպերամենտով, կրքով, արտիստիկ նյարդայնությամբ և այն ազնվությամբ ու չափի զգացումով լի խաղով, որը հատուկ է միայն

[20] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 13–79:*

[21] *Ի դեպ, Լ. Աուերը Նալբանդյանին առաջարկում է դառնալ իր օգնականը: Այդ պահից սկիզբ է առնում նաև Նալբանդյանի մանկավարժական կարիերան, որին նա տրվեց իր երիտասարդ ոգու ողջ ուժով:*

[22] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 4:*

գեղարվեստական մեծ անհատականություններին: Դա վիթխարի տաղանդ էր: Շատ տարիներ են անցել, բայց նրա խաղի ազդեցությունը դեռևս կենդանի է իմ հիշողության մեջ և ինքնաբերաբար ծագում էր համեմատությունը Ադամյանի հետ, երբ տեսնում էի մեծ ողբերգակների, ինչպիսիք էին Ռոսսին, Սալվինին, Պոսարտը և այլք: Այդ համեմատությունից Ադամյանը չէր տուժում: Նա մեր ժողովրդի ծնած խոշորագույն տաղանդներից է»[23]:

1890 թ. աշնանը Հովհ. Նալբանդյանը Պետերբուրգում ծանոթանում է մի քանի հայ ուսանողների հետ, որոնցից առանձնանում էր Գրիգորի Եվանգուլովը՝ հայկական ուսանողական երեկոյի կազմակերպիչներից մեկը: Նա պնդում է, որպեսզի Նալբանդյանը մասնակցի այդ երեկոյին. դա Նալբանդյանի անդրանիկ հանրային ելույթն էր կոնսերվատորիայի պատերից դուրս:

Հարկ է նշել, որ մինչ այդ հայկական երեկոն ջութակահարը կրում էր Նալբանդով ազգանունը: Ուսանող ընկերները նրան համոզում են ազգանվան «ով»-ը փոխարինել «յան»-ով, որպեսզի բոլորն իմանան, որ նա հայ է: Դիրեկտոր Ռուբինշտեյնը հավանություն է տալիս այդ մտադրությանը և կարգադրում, որպեսզի փոխեն Նալբանդյանի բոլոր փաստաթղթերը:

«Ես ֆրակ չունեի, համերգից առաջ ուսանողներն ինձ համար ֆրակ գտան, ես հագա և ի սարսափ ինձ՝ նկատեցի, որ աջ թևին ծակ կա, և ընդհանուր խորհրդակցությունից հետո որոշեցինք թանաքով ներկել իմ վերնաշապկի՝ երևացող ճերմակ մասը: Ես մեծ հաջողություն ունեցա: Այդ երեկոյի ընթացքում ծանոթացա Գ. Ա. Էզովի հետ (խոսքը նշանավոր հայագետ Կարապետ Եզյանի մասին է– Ա. Ա.), ով ինձ վերաբերվեց շատ ջերմ և սրտագին: Նա խորապես սիրում էր իր ժողովրդին. նրան հիացնում էր որևէ հայի մոտ տաղանդի ցանկացած դրսևորում և նա ունակ էր այնպիսի քնքշության ու հոգատարության, ինչն ամենևին ներդաշնակ չէր նրա դեմքի խիստ արտահայտությանը: Ինչքան շատ էի ճանաչում Գ. Ա. Էզովին, այնքան ավելի էի համոզվում նրա ազնիվ հայրենասիրության և բարձր արժանիքների մեջ: Օրերից մի օր Գ. Ա. Էզովն ինձ ուրախությամբ տեղեկացրեց, որ Ռուբինշտեյնը եղել է Այվազովսկու մոտ և շատ լավ բաներ ասել իմ մասին, ու Էզովի ներկայությամբ Այվազովսկին Ռուբինշտեյնին խոստացել է ինձ նկար նվիրել, որպեսզի այն վաճառեմ և ինձ համար ջութակ գնեմ: Գ. Ա. Էզովի և իմ վաղաժամ ուրախությունն անտեղի էր՝ նկարը ես չստացա ...»[24]:

Հայկական երեկոյից հետո Նալբանդյանը հրապարակային ելույթներ շատ է ունենում, ընդ որում՝ մեծ հաջողությամբ. «Երկար տարիների փորձառությունից հետո ես եկա այն եզրակացության, որ էստրադան մեծ ուսուցիչ է, երբեք մարդը տանը չի կարող նկատել այն թերությունները, որոնք հուզմունքի արդյունքում ի հայտ են գալիս բեմում»[25]:

Մոտենում է ջութակի գարնանային քննության ժամանակը: Առերը հանձնարարում է Հ. Էռնստի դժվարագույն ֆանտազիան, որը Նալբանդյանը պետք է պատրաստեր 12 օրվա ընթացքում: «Մենք՝ աշակերտներս, լսել էինք, որ մեր դիրեկտորը հեռանում է կոնսերվատորիայից, բոլորս սաստիկ տխրել էինք: Այդ քննությունը Ռուբինշտեյնի օրոք վերջինն էր, և քննության

---

[23] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 5:*
[24] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 6:*
[25] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 7:*

ժամանակ մենք հատկապես ոգևորված էինք՝ ուզում էինք մեզնից հեռացող դիրեկտորի մոտ մեր մասին լավ հիշողություն թողնել: Քննությունն անցավ փայլուն: Ես նվագեցի վերջինը: Քննությունից հետո Ռուբինշտեյնն ինձ կանչեց իր մոտ կաբինետ, շատ լավ բաներ ասաց և խնդրեց Այվազովսկուն հիշեցնել նկարի վերաբերյալ խոստման մասին, ինչպես նաև իր անունից հորս փոխանցել, որ նա կարող է ուրախանալ իր որդու հաջողություններով: Տեղեկանալով իմ ֆինանսական դժվարությունների մասին՝ Ռուբինշտեյնն ու Առները ինձ փող տվեցին ճանապարհի համար: Երջանիկ՝ ես մեկնեցի տուն»[26]:

Ամռանը Սիմֆերոպոլում Նալբանդյանին է այցելում ուսանող, հետագայում՝ խոշորագույն կոմպոզիտոր, հայ սիմֆոնիկ երաժշտության հիմնադիր Ալեքսանդր Սպենդիարյանը: Միևնույն քաղաքի բնակիչներ լինելով՝ նրանք իրար ճանաչում էին հեռվից, մոտիկից ծանոթ չէին: «Սաշան ինձ մոտ եկավ ուսանողական համազգեստով, – տարիներ հետո պատմում էր Նալբանդյանը: –Նա ինձ անմիջապես դուր եկավ. ոսկեգույն հրաշալի մազեր, երկնագույն լավ աչքեր, նուրբ, ձվաձև դեմք: Այն ժամանակ նա արդեն պենսնե էր կրում:

Ես Սիմֆերոպոլում հայտնի էի որպես ջութակահար: Այդ տարիներին Պետերբուրգից գալիս էի և ելույթներ ունենում: Հավանական է, այդ պատճառով էլ նա եկավ ինձ հետ ծանոթանալու:

Ներկայանալով՝ նա նստեց դաշնամուրի մոտ և սկսեց հանդարտ, հանպատրաստից նվագել ու ինձ պատմել մոսկովյան երաժշտական կյանքից, այն մասին, որ ինքը ջութակի դասեր է առնում Պեկարսկուց: Հետո նա նստեց ավելի հարմար և նվագեց իր ռոմանսները, երգելով ցածր, «կոմպոզիտորական» ձայնով: Երբ վերջացրեց, ես նետվեցի դեպի նա, ամուր գրկեցի և ասացի, որ նա անպայման կոմպոզիտոր դառնա: Իսկ նա համեստորեն հարցրեց. «Արժե՞, արդյոք»»[27]:

Անդրադառնալով իրենց հանդիպմանը՝ Նալբանդյանն իր «Ինքնակենսագրության» մեջ կխոստովանի, որ Սպենդիարյանի «ռոմանսներն ինձ շատ դուր եկան և ես նրանցում զգացի տաղանդ ու համոզեցի նրան լրջորեն զբաղվել երաժշտությամբ: Սպենդիարովի ստեղծագործություններն այն ժամանակ արդեն առանձնանում էին երաժշտականությամբ, նրբագեղությամբ և ազնվությամբ: Հետագայում մենք նրա հետ շատ ընկերացանք, լինում էինք իրար մոտ, և մեր ողջ ժամանակը նվիրում երաժշտությանը, շատ էինք նվագում, նա ինձ բազմիցս նվագակցում էր ռոյալի վրա՝ Սիմֆերոպոլում, Եվպատորիայում մեր համերգային ելույթների ժամանակ: Այդ ժամանակ էլ նա ինձ համար գրեց ջութակի համար շատ գեղեցիկ ռոմանս («Կանցոնետտա»– Ա. Ա.), որը ես նվագում էի հափշտակվածությամբ: Շատ ափսոս, որ այդ գեղեցիկ ստեղծագործությունը հետագայում կորավ»[28]:

Ճակատագրական էր Նալբանդյանի դերը Սպենդիարյանի ստեղծագործական կյանքում: Հենց նա էլ Պետերբուրգում 1896 թ. Սպենդիարյանին ծանոթացնում է ռուս ականավոր կոմպոզիտոր, կոնսերվատորիայի պրոֆեսոր Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովի հետ, որի ղեկավարությամբ նա շարունակում է կա-

[26] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 7:*
[27] *Սպենդիարովա. 1966, 32:*
[28] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., №1 (ա), 1913 թ., էջ 8:*

տարելագործվել կոմպոզիցիայի գծով[29]: Հետագայում Նալբանդյանը կհիշի. «Նա (Սպենդիարյանը – Ա. Ա.) ինձ մոտ եկավ առանց նախագգուշացման: Հիշում եմ, սաստիկ հուզված էր: Նա հարցրեց ինձ. «Ծանո՞թ ես, արդյոք, Ռիմսկի-Կորսակովին»: – Ինչպես կարող էի ծանոթ չլինել, երբ այն ժամանակ արդեն դասավանդում էի կոնսերվատորիայում: – «Չե՞ս կարող, արդյոք, իմանալ ... Աղաչում եմ քեզ, խոսիր նրա հետ ... Ուզում եմ մոտը սովորել»:

Ես Ռիմսկի-Կորսակովին հանդիպեցի հենց հաջորդ օրը, կոնսերվատորիայում՝ երրորդ հարկում: Սովորաբար Ռիմսկի-Կորսակովը, Լյադովը, Լավրովսկին և Գլազունովը ընդմիջումներին թեյում էին կոնսերվատորիայի տեսուչ Աբրամիչևի առանձնասենյակում:

Ես Նիկոլայ Անդրեևիչին հաղորդեցի Սաշայի խնդրանքը: «Մի շատ շնորհալի պատանի է եկել, – ասացի ես: – Նա շատ է ուզում, որ Դուք իրեն լսեք, շատ է ցանկանում ձեզնից դասեր վերցնել»: Ռիմսկի-Կորսակովն իմ խոսքերը լսեց բարյացակամորեն:

Նա նշանակեց ժամադրության օրն ու ժամը, և մենք գնացինք: Հիշում եմ, ցերեկ էր: Նիկոլայ Անդրեևիչը մեզ դիմավորեց նախասենյակում: Պետք էր տեսնել Սաշայի դեմքը, երբ նա մոտեցավ նրան: Որպիսի հիացմունք: Ես հիանում էի, որ նա այդպես զգայուն է»[30]:

Շնորհիվ Նալբանդյանի՝ իրականանում է Սպենդիարյանի երազանքը. 1896 թ. ապրիլին նա իր աշխատանքները ներկայացնում է Ռիմսկի-Կորսակովին: Պայմանավորվածության համաձայն՝ մայիսի 10-ին Սպենդիարյանը ստանում է կոմպոզիտորի պատասխանն առ այն, որ նա պետք է պարապի կոմպոզիցիայով և համաձայն է լինել նրա ուսուցիչը:

Հովհ. Նալբանդյանը «հիացած էր Սպենդիարյանի ստեղծագործական տաղանդով և գտնում էր, որ ժամանակակից կոմպոզիտորներից դեռևս ոչ մեկին չի հաջողվել Արևելքը պատկերել այնպիսի հարազատությամբ, վառ գույներով ու կոլորիտով, ինչպես նրան: Նալբանդյանը նկատի ուներ «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը և «Ղրիմի էսքիզների» երկու սերիաները: Երկու հայրենակիցների բարեկամական ջերմ փոխհարաբերությունները կտևեին դեռևս երկար տարիներ, եթե վրա չհասներ Սպենդիարյանի անժամանակ մահը»[31]:

Կոնսերվատորիայում ուսումնառության վաղ շրջանում Հովհ. Նալբանդյանը ծանոթանում է կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ, հայ երաժշտության մեջ օրատորիա-կանտատի («Պատարագ») ժանրի հիմնադիր Մակար Եկմալյանի հետ, ով արդեն ավարտում էր կոնսերվատորիան: Եկմալյանը շատ ջերմ վերաբերմունք է ունեցել իր կրտսեր ընկերոջ՝ Նալբանդյանի նկատմամբ և ռոյալի վրա որոշ հատվածներ է նվագել իր «Պատարագից», որի վրա աշխատում էր այդ տարիներին:

Խմբավար, կոմպոզիտոր, երաժշտական-հասարակական գործիչ Քրիստափոր Կարա-Մուրզան Նալբանդյանի հորական տատի քրոջ կամ եղբոր որդին էր, և մանկական հիշողությունները կապված են նրա հետ: Նա հաճախ էր

---

[29] Գևորգյան. 1962, 27:
[30] Սպենդիարովա. 1966, 59–60:
[31] Գևորգյան. 1962, 28:

այցելում Նալբանդյաններին, սիրում էր զբաղվել Հովհաննեսի հետ. «Ես շատ էի սիրում նրան և միշտ սպասում էին նրա գալուն»[32]:

1892 թ. աշնանը տեղի է ունենում երիտասարդ ջութակահարի ծանոթությունը Պյոտր Չայկովսկու հետ: Պրոֆեսոր Աուերի մոտ տեղի ունեցած երեկոյի ժամանակ Աուերն առաջին անգամ կատարում է Չայկովսկու կոնցերտը, որը կոմպոզիտորը նվիրել էր նրան, ինչպես նաև Չայկովսկու կվարտետն ու լարային սեքստետը: Երեկոյին ներկա էին Չայկովսկին և Աուերի աշակերտներից մի քանիսը: «Արժե արդյոք խոսել այն մասին, թե մենք ինչպիսի հիացմունքով էինք նայում Չայկովսկուն, որն այդ ժամանակ գտնվում էր փառքի գագաթին: Չայկովսկու ստեղծագործությունները, նրանց հետ առաջին իսկ ծանոթությունից, գրավեցին ինձ և մեծապես ազդեցին իմ պատանեկան էության վրա ... : Հատկապես ես սիրում էի նրա «Ֆրանչեսկա դա Ռիմինին», «Ռոմեո և Ջուլիետը», մի քիչ ավելի պակաս՝ «Եվգենի Օնեգինը»: Այդ երեկո ես քիչ էի լսում և հասկանում՝ իմ ողջ ուշադրությունը կլանել էր Չայկովսկին, իմ աչքերում նա հրաշագործ էր, ով կարողանում էր ստեղծել այդպիսի երաժշտություն: Ընթրիքից հետո արդեն շատ ուշ էր, ներկաներից ինչ-որ մեկը նրա ուշադրությունը հրավիրեց ինձ վրա, որին հետևեց նրա խնդրանքը՝ ջութակի վրա նվագել ինչ-որ բան: Ես շատ շփոթվեցի նրա անսպասելի ուշադրությունից և մերժեցի, բայց մեզ մոտեցած իմ պրոֆեսորը կարգադրեց նվագել: Ես նվագեցի իմ մշակած ղրիմյան մոտիվը, որը նրան շատ դուր եկավ, ապա նա խնդրեց նվագել եվրոպական ինչ-որ բան, ինչպես ինքն արտահայտվեց: Վերջում նա ինձ ասաց շատ լավ բաներ և հատկապես ուշադրություն դարձրեց իմ հնչյունի և կատարման ջերմության վրա: Պե՞տք է արդյոք ասել, թե ինչքան երջանիկ էի Չայկովսկու ուշադրությունից»[33]:

Նկատենք, որ Պետերբուրգում Հովհ. Նալբանդյանը ծանոթանում է ռուս բանաստեղծներ Վ. Ի. Մայկովի և Յա. Պ. Պոլոնսկու, ինչպես նաև՝ հայ երգիչ Ներսես Շահլամյանի հետ, ով իր ձայնի զարմանալի գեղեցկությամբ և ուժով, հայկական երգերի իր կատարմամբ հիացնում էր Նալբանդյանին: Ծանոթանում է նաև նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի հետ:

Առաջին հյուրախաղերը Թիֆլիսում

1893 թ. ամռանը, հոր պնդմամբ, Հովհ. Նալբանդյանը կատարում է անդրանիկ համերգային շրջագայությունը Թիֆլիս: «Տարազ» թերթը դեռևս ապրիլի 25-ի կիրակնօրյա համարում տպագրում է «Երիտասարդ ջութակահար Յովհաննէս Նալբանդեան» վերնագրով հոդվածը, որտեղ, ներկայացնելով 21-ամյա երաժշտի համառոտ կենսագրականը, նշում է՝ Նալբանդյանը «մտադիր է մայիս ամսին գալ Թիֆլիս. յուսով ենք, որ Թիֆլիսի հասարակութիւնը կը քաջալերէ երիտասարդ արտիստին ըստ արժանւոյն»:

Նալբանդյանի Թիֆլիսյան դեբյուտը տեղի ունեցավ մայիսի 31-ին Արքունական թատրոնում և «ընդհանրապէս շատ ախորժելի տպաւորութիւն թողեց հանդիսականների վրա»[34]: Ունկնդիրների պահանջով՝ ջութակահարը մի քանի

[32] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 9:*
[33] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 9:*
[34] *«Արձագանք» (Թիֆլիս), 02. VI. 1893:*

անգամ նվագում է բիս[35]*: Ծրագրում տեղ էին գտել Մենդելսոնի ջութակի կոնցերտի ֆինալը, Վենյավսկու Մազուրկան, Բրամսի պարերը և այլն: Համերգից հասարակությունը «ցրտեց այն համոզմունքով, որ պ. Նալբանդեան (որ այժմ 21 տարեկան է) տարէց տարի կ'առաջադիմի, և այն քաղցր զգացմունքով, որ պատահում է մարդուս, երբ նա տեսնում է իր առաջ որևէ դեռ մշակւող, սակայն անկասկած տաղանդ»*[36]*:*

Մամուլը գովեստի խոսքեր է շռայլում երիտասարդ ջութակահարի հաստեին, միաժամանակ նկատում. «Ցավոք, ջութակահարի գործիքն այնքան էլ առաջնակարգ չէ, ինչը զգալիորեն նվազեցնում է նրա նվագի տպավորությունը»[37]*:*

Նալբանդյանի երկրորդ համերգը Թիֆլիսում տեղի է ունենում հունիսի 5-ին՝ շաբաթ օրը, կրկին Արքունական թատրոնում. «Երիտասարդ Նալբանդեանի կոնցերտից շատ գոհ էին թատրոնի փոքրաթիւ հանդիսականները, որոնք և յաճախ կրկնուող ծափահարութիւններով իրենց գոհութիւնն էին արտայայտում»[38]*:*

Հունիսի 17-ին Թիֆլիսի ժողովարանի այգում տեղի է ունենում «մեր երիտասարդ ջութակահար Յ. Նալբանդեանի երրորդ նուագահանդէսը: Այս անգամ մեծ բազմութիւն էր հաւաքել: Մարդ քանի լսում է պ. Նալբանդեանին՝ այնքան համոզւում է, որ մեծ տաղանդ պիտի լինի նա ապագայում: Նրա ամեն մի նւագած կտորը, ինչքան էլ որ հասարակ լինի դա, բանաստեղծական քաղցրահնչիւն թելերով է ոլորած – յատկութիւն, որ շատ սակաւ երաժիշտներին է պարգևած: Նրա ջութակը չէ նւագում, նա իր առաջ նստած՝ յուզած բազմութեան հետ խոսում է, հին հելլենական բանաստեղծ-երգչի նման նա մերթ հերոսների քաջագործութիւններն կարծես պատմելիս լինի և այստեղ ջութակը այնպիսի հնչիւններ է հանում, որ մարդ ակամայ ներկայացնում է այդ հերոսներին ճակատամարտի դաշտում – բայց ահա՝ ընկաւ հսկան – իսկ հեռու՝ նրա այրին օրօրք է ասում իր տղային և արտասւալի աչքերով մեղմահնչիւն երգում. «Քուն եղիր, պալաս, որ մեծանաս, վերցնես հօրդ զրահները, և նրա նման հերոս դառնաս». լռում են հնչիւնները – և այստեղ միայն սթափւում է մարդը և տեսնում որ ջութակն էր այդպիսի երգեր երգում: Պետերբուրգում զուր չեն ասում, որ Նալբանդեանը իր ջութակով երգում է»[39]*: Երկու բաժնից բաղկացած համերգի ծրագրում տեղ էին գտել Վիյոտանի, Բրամսի, Յոախիմի, Վենյավսկու և այլոց պիեսները:*

Հովհ. Նալբանդյանի արտիստական գործունեության մեկնարկը

Հովհ. Նալբանդյանի կյանքում նշանակալից էր 1894 թ.: Գարնանը նա ավարտում է կոնսերվատորիան և աշակերտներից առաջինն է արժանանում կոնսերվատորիայի պատերի ներսում Զայկովսկու կոնցերտը կատարելու պատվին: Կոնցերտի առաջին մասը նվագում է հրապարակային քննության

---

[35] «Новое обозрение» (Тифлис), 29. V. 1893.
[36] *«Տարազ» (Թիֆլիս), 06. VI. 1893:*
[37] «Каспий» (Баку), 04.VI. 1893.
[38] *«Նոր-դար» (Թիֆլիս), 10. VI. 1893:*
[39] *«Տարազ», 20. VI. 1893:*

ժամանակ նվագախմբի նվագակցությամբ և ստանում ամենաբարձր գնահատականը:

Ապրիլի 27-ին Պետերբուրգի կոնսերվատորիայում տեղի ունեցած Եվգենյա Շումանի համերգին[40] ելույթ է ունենում «պ. Աուերի տաղանդավորագույն աշակերտներից մեկը՝ ջութակահար Նալբանդյանը»[41], ով փայլուն կատարելով «Andante»-*ն Վենյավսկու կոնցերտից, Գոդարի* «Berceuse»-*ը և որպես բիս՝ Վենյավսկու Մազուրկան՝ «հիացնում է ունկնդիրներին գերազանց տեխնիկայով և հյութեղ, հնչեղ տոնով»[42]: Ակնհայտ է, որ Նալբանդյանին «սպասում է մենակատար-ջութակահարի փայլուն կարիերա»[43]:*

Նալբանդյանի նախկին պրոֆեսոր Ն. Գալկինը, ով 1892–1903 թթ. Պավլովսկի կայարանի[44] Ամառային սիմֆոնիկ համերգների դիրիժորն էր, որոնցում պրոպագանդում էր «Նոր ռուսական երաժշտական դպրոցի» կոմպոզիտորների ստեղծագործությունները, հրավիրում է Նալբանդյանին որպես Պավլովսկի կայարանի սիմֆոնիկ համերգների մենակատար: 1894 թ. հունիսի 3-ին Պավլովսկի Երրորդ սիմֆոնիկ երեկոյին Նալբանդյանը կատարում է Մենդելսոնի ջութակի կոնցերտը՝ փայլուն տեխնիկայով: Սիմֆոնիկ նվագախմբի հետ հենց առաջին ելույթից երջանկությունը ժպտում է նրան, և նա մեծ հաջողություն է ունենում, որը նրան ուղեկցում է հետագա երկու ամսվա ընթացքում՝ յուրաքանչյուր բեմելին:

Հունիսի 22-ին Իվանովսկում տեղի է ունենում Գալկինի նվագախմբի բենեֆիսը, որին մասնակցում են նաև մենակատարներ, այդ թվում՝ Բրյուսելի կոնսերվատորիայի պրոֆեսոր Էդուարդ Ժակոբսը: Մեծ հաջողություն է ունենում «Երիտասարդ ջութակահար-մենակատար պ. Նալբանդյանը, որի նվագը առանձնանում է նրբագեղությամբ և աղեղի երգեցիկությամբ»[45]: Համերգին մասնակցում է նաև հայ տենոր Ներսես Շահլամյանը. ի դեպ՝ հետագայում բազմաթիվ համերգների հայտագրերում կտեսնենք երկու հայրդիների՝ Հ. Նալբանդյանի և Ն. Շահլամյանի անուններն ու համատեղ ելույթները:

Հուլիսի 1-ին Պավլովսկում տեղի ունեցած 7-րդ սիմֆոնիկ երեկոն, որը կայարան է բերում բազմաքանակ ունկնդիրների, անցնում է մեծ աշխուժութ-

---

[40] «Петербургская газета» (СПб.), 29. IV. 1894.

[41] «Новости» (СПб.), 29. IV. 1894.

[42] «Новости», 29. IV. 1894.

[43] «Новое время» (СПб.), 01. V. 1894.

[44] *Պավլովսկի կայարանը համերգային դահլիճ էր Պավլովսկում՝ Պետերբուրգի արվարձանում, որտեղ XIX դարում և XX դարասկզբին ամռան ամիսներին կենտրոնանում էր Պետերբուրգի երաժշտական կյանքը: Բացվել է 1838-ին: Առաջին 40 տարիներին երաժշտական երեկոները հիմնականում կրում էին զվարճանքի բնույթ, հետագայում ստացան ավելի լուրջ բնույթ: 1880-ականների սկզբից գործում էր Պավլովսկի կայարանի մշտական նվագախումբը, որը 1890-ականներից կազմված էր գլխավորապես ռուս երաժիշտներից: 1900-ականների սկզբներին Պավլովսկի կայարանի համերգները ղեկավարել են Ա. Կ. Գլազունովը, Մ. Մ. Իպպոլիտով-Իվանովը և ուրիշներ: 1917-ին միավորվեցին Պավլովսկի նվագախումբը և պետական սիմֆոնիկ նվագախումբը (1921-ից՝ Լենինգրադի ֆիլհարմոնիայի սիմֆոնիկ նվագախումբ):*

[45] «Сын отечества» (СПб.), 24. VI. 1894.

յամբ: Համերգի առաջին բաժնում Հովհ. Նալբանդյանը նվագում է Շոպրի 8-րդ կոնցերտը և Ռիսի ոչ մեծ պիեսներից մեկը: «Կարճ ժամանակահատվածում այս երիտասարդ և շնորհալի ջութակահարը դարձավ իսկական սիրելին Պավլովսկի հասարակության, որը նրան առատաձեռնորեն շռայլում էր իր ծափահարությունները: Պ. Նալբանդյանի հաջողությունն ինքը լիարժեքորեն վաստակել է»[46]*:*

Հուլիսի 13-ին Պավլովսկում կազմակերպված վոկալ-գործիքային երաժշտության համերգին՝ ի շարս մեծ թվով մենակատարների, ելույթ է ունենում Նալբանդյանը և կատարում Բրուխի 2-րդ կոնցերտի առաջին մասը: Հուլիսի 20-ին տեղի ունեցած երեկոյին էլ, որին մասնակցում էին Ֆիգներ ամուսինները, պրոֆեսոր Ժակոբը, նվագախումբը՝ Գալկինի ղեկավարությամբ, Նալբանդյանը նվագում է Վիյոտանի “Reverie”*-ը և բիս՝ փոքրիկ պիես:*

Օգոստոսի 19-ին Պավլովսկի 13-րդ սիմֆոնիկ երեկոյին Գալկինը դիրիժորական վահանակը զիջում է կոմպոզիտոր Մ. Իվանովին, ով առաջին անգամ հանդես է գալիս որպես դիրիժոր: Համերգի ծրագրում տեղ էին գտել վերջինիս ստեղծագործությունները[47]*: Իվանովի կոնցերտի երկու մասերի կատարմամբ հանդես եկած Նալբանդյանը նվագում է հիանալի: «Պ. Նալբանդյանն ունի ապագա. նրա տոնը շատ լավն է, աղեղը՝ բավականաչափ ուժեղ և երգեցիկ: Նա, իհարկե, նվագեց որպես բիս և կատարեց Ռիսի* «Gondelied»*-ը: Հասարակությունը սիրում է այս ջութակահարին, և նա արժանի է դրան»*[48]*:*

Օգոստոսի 26-ին Պավլովսկի վերջին սիմֆոնիկ երեկոն նվիրված էր Չայկովսկու հիշատակին և բաղկացած էր բացառապես նրա ստեղծագործություններից: Մենակատարը՝ Նալբանդյանը, նվագում է Չայկովսկու կոնցերտը:

Հովհ. Նալբանդյանի հանդիպումները Յոզեֆ Յոախիմինի և Պաբլո Սարասատեի հետ

1894 թ. աշնանը Կայսերական թատրոնների դիրեկցիան՝ հետագա կատարելագործման նպատակով, Նալբանդյանին գործուղում է արտասահման: Այդ ուղևորության միջոցները՝ 2500 ռուբլի, հատկացնում է Նորին մեծություն կայսեր կաբինետը: Պրոֆեսոր Լ. Աուերը տալիս է երաշխավորություն-նամակներ՝ ուղղված ջութակահարների պատրիարք, հունգար ջութակահար, մանկավարժ, կոմպոզիտոր ու դիրիժոր Յոզեֆ Յոախիմին և իսպանացի ջութակահար, խոշորագույն վիրտուոզ Պ. Սարասատեին:

Ժամանելով Բեռլին՝ Նալբանդյանն ուղևորվում է Յոախիմի մոտ, որն այդ ժամանակ Արքայական կոնսերվատորիայի դիրեկտորն էր, և նրան է հանձնում վերջինիս նախկին աշակերտ Աուերի նամակը: Յոախիմը Նալբանդյանին թույլ է տալիս ներկա գտնվել իր դասերին: Շաբաթական չորս օր՝ առավոտյան ժամը 10-ից 14-ը, նա մասնակցում է Յոախիմի պարապմունքներին: Վերջինիս դասարանն առանձնահատուկ էր, քանի որ բաղկացած էր տարբեր վայրերից իր մոտ սովորելու եկած երիտասարդ արտիստներից: Յոախիմը դասեր, ըստ էության, չէր տալիս, այլ ունկնդրում էր վերջին-

[46] «Петербургский листок» (СПб.), 03. VII. 1894.

[47] «Новое время», 22. VIII. 1894.

[48] «Петербургская газета», 21. VIII. 1894.

ներիս արդեն պատրաստի կոնցերտը, անում էր դիտողություններ, այնուհետև Ստրադիվարիուսի վրա նվագում տվյալ կոնցերտը: «Այդ 67-ամյա ծերուկը դասարանում ցույց էր տալիս ամենատարբեր կոնցերտներ, տարբեր ոճերով, և ինչպես էր նվագում: Այն ամենը, ինչ ես լսեցի մեծ Յոախիմի կատարմամբ, մինչ օրս կենդանի է իմ հիշողության մեջ: Մի քանի անգամ ես պատիվ ունեցա նվագել նրա մոտ և արժանացա գովասանական գրավոր կարծիքի, որի պատճենը պիտի ուղարկեի Պետերբուրգ՝ թատրոնների դիրեկցիային, իսկ բնօրինակը[49] պահպանում եմ ինձ մոտ որպես մասունք»[50]: Այդ երկտողում Յոախիմը գրել է. «Ես լսեցի Նալբանդյանին և գտա, որ նա ունի ջութակահարի շատ լավ հատկություններ, որոնք խոստանում են մեծ զարգացում. նա արդեն շատ լավ է նվագում»[51]:

Ի դեպ, Նալբանդյանը հետագայում գրել է իր հուշերը Յո. Յոախիմի մասին, որոնք պահվում են ՀՀ գրականության ու արվեստի թանգարանում գտնվող ջութակահարի արխիվում և մեր ջանքերով հրապարակվեցին վերջերս՝ «Արվեստագիտական հանդես»-ում[52]:

Լ. Աուերը, բավարարված լինելով Հովհ. Նալբանդյանի՝ Բեռլին կատարած այցելության արդյունքներով և իր աշակերտի հանդեպ Իոախիմի ցուցաբերած ուշադրությունից, խորհուրդ է տալիս նրան մայիսին մեկնել Լոնդոն՝ այնտեղ համերգներով հանդես եկող Սարասատեին լսելու և նրան ներկայանալու նպատակով: Լոնդոնում Նալբանդյանը ներկա է գտնվում Սարասատեի համերգին. վերջինիս նվագը նրա վրա թողնում է անանց տպավորություն. «Հնչյունի ոչ երկրային զարմանալի գեղեցկություն, այնպիսի նրբագեղություն և այնպիսի տեխնիկական կատարելություն, ասես ես լսում էի ոչ թե ջութակ, որը լավ գիտեի, այլ ինձ համար բոլորովին նոր գործիք: Համերգից հետո ես եղա նրա մոտ արտիստական սենյակում, մենք ծանոթացանք և նա նշանակեց օր, որպեսզի ինձ լսի: Նա շատ ուշադիր և սիրալիր էր իմ հանդեպ, ըստ երևույթին, իմ նվագը նրան շատ դուր եկավ, քանի որ իմ մասին տվեց փայլուն կարծիք, որի պատճենը նույնպես ես ուղարկեցի Պետերբուրգ՝ թատրոնների դիրեկցիային, իսկ բնօրինակը պահում եմ ինձ մոտ»[53]:

Բեռլինում ու Լոնդոնում Նալբանդյանը հաճախում է սիմֆոնիկ և մենակատարային բոլոր համերգներին, ինչպես նաև՝ օպերային ներկայացումներին ու կվարտետային հավաքույթներին: Բեռլինում ծանոթանում է Վագների բոլոր օպերաներին՝ բացառությամբ «Պարսիֆալի», Յոախիմի կվարտետներին, Լոնդոնում լսում է ժամանակի խոշոր դաշնակահարներից մեկին՝ ռոմանտիկական ոճի ներկայացուցիչ, նշանավոր լեհ դաշնակահար, կոմպոզիտոր ու հասարակական գործիչ Իգնացի Յան Պադերևսկուն, նաև՝ Նիկիշ Ռիխտերին ու շատ ուրիշ մեծ արտիստների:

1895 թ. աշնանը Նալբանդյանը վերադառնում է Պետերբուրգ, առաջին իսկ օրն այցելում է Աուերին ու մանրամասն զեկուցում իր՝ լոնդոնյան երաժշտական տպավորությունների մասին: «Իմ զեկույցը տևեց շատ երկար, բայց

[49] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 348:*
[50] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 13:*
[51] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 348:*
[52] Асатрян. 2021, 201–219:
[53] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (ա), 1913 թ., էջ 13–14:*

Աուերը լսում էր շատ ուշադիր, երբեմն՝ հարցեր տալիս, իսկ երբ ավարտեցի, ասաց. «Ահա, տեսնու՞մ եք, Նալ, ինչ օգտակար էր Ձեզ համար արտասահմանյան ուղևորությունը. Բեռլինում Դուք ունկնդրեցիք դասական ստեղծագործությունների՝ մեծ երաժիշտ-արվեստագետների կատարումների բարձրագույն նմուշները, իսկ Լոնդոնը Ձեզ հնարավորություն ընձեռեց լսել Սարասատեին՝ վիրտուոզ բարձրագույն կատարելությանը, ջութակի նվագի ֆենոմենալ երևույթին»»[54]:

Հովհ. Նալբանդյանի համերգային գործունեությունը

Արտասահմանից վերադառնալով՝ ամբողջ մի տարի՝ մինչև 1896-ի վերջը, Նալբանդյանը ջերմեռանդորեն պարապում է, քանի որ 1897 թ. հունվարի 4-ին նախատեսվում էր նրա ելույթը Կայսերական ռուսական երաժշտական ընկերության Սանկտ-Պետերբուրգի մասնաճյուղի 6-րդ սիմֆոնիկ համերգին: Դա Նալբանդյանի առաջին ելույթն էր Ռուսական երաժշտական ընկերության սիմֆոնիկ համերգում, որն ունեցավ հսկայական հաջողություն: Նվագախումբը ղեկավարում էր գերմանացի դիրիժոր Մաքս Էրդմանսդորֆերը, ով այդ տարիներին Պետերբուրգում РМО-*ի* (Русское музыкальное общество) *սիմֆոնիկ համերգների դիրիժորն էր: Համերգին որպես մենակատար հանդես եկած Հովհ. Նալբանդյանը կատարում է ռոմանտիկական ուղղության խոշորագույն ներկայացուցիչներից մեկի՝ բելգիացի ջութակահար, կոմպոզիտոր ու մանկավարժ Անրի Վիյոտանի Ջութակի և նվագախմբի չորրորդ՝* d-moll *բարդագույն կոնցերտը: Կատարման ընթացքում նա ցուցադրում է «հիանալի տեխնիկա, վիրտուոզություն, հյութեղ, գեղեցիկ, երգեցիկ տոն, գերազանց ֆրազավորում, ջերմություն, նրբագեղություն և արտիստիկ ճաշակ»*[55]: *Մամուլում արձանագրվում է՝ Հովհ. Նալբանդյանը «պ. Աուերի հիանալի դպրոցի նոր ապացույցն է. վերջինս կարող էր հպարտորեն ներկա գտնվել երեկ իր սանի տրիումֆին և իր հաշվին ընդունել ծափահարությունների զգալի մասը»*[56]:

Ունկնդիրների աղմկոտ ծափահարություններից հետո, որպես բիս՝ ծրագրից դուրս Նալբանդյանը նվագում է Զայկովսկու «Մեղեդին»: Ի դեպ, «Նալբանդյանի հաջողությունն այնքան մեծ էր, որ նա որպես bis *կարող էր նվագել մի քանի համարներ, և ոչ թե սահմանափակվեր Զայկովսկու ռոմանսի կատարմամբ, որը, ի դեպ, նվագեց սքանչելիորեն»*[57]:

Այսպիսով՝ Պետերբուրգի երաժշտասեր հանրության առջև Հովհ. Նալբանդյանի առաջին ելույթն ունեցավ մեծ հաջողություն. «Բոլոր լրագիրները լի էին գովեստներով, գուշակելով պ. Նալբանդեանին փառավոր ապագա»[58]:

1897 թ. հունվարի 31-ին Պետերբուրգում տեղի է ունենում Նալբանդյանի առաջին մենահամերգը: Համերգին մասնակցում են բարիտոն Մ. Վ. Լունաչարսկին և դաշնակահար Ա. Մ. Միկլաշևսկին: Հովհ. Նալբանդյանը կատարում է իտալացի ջութակահար, կոմպոզիտոր, երաժիշտ-տեսաբան և ման-

---

[54] *ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 2:*

[55] «Петербургский листок», 06. I. 1897.

[56] «Петербургская газета», 05. I.1897.

[57] «Биржевые ведомости» (СПб.), 06. I. 1897.

[58] *«Արձագանք», 09. II. 1897:*

կավարժ Ջուզեպե Տարտինիի ջութակի g-moll *Սոնատը, Մենդելսոնի Ջութակի կոնցերտը, Առերի* «Reverie»-*ն («Անուրջներ»), Սարասատեի* «Zigeunerweisen»-*ը, ինպես նաև ջութակի համար գրված սեփական ստեղծագործությունները՝* G-dur *Ռոմանսը և* A-dur *էտյուդը*[59]*: Ուշագրավ է, որ իր առաջին համերգին Նալբանդյանը հանդես է գալիս ոչ միայն որպես վիրտուոզ, այլև որպես կոմպոզիտոր՝ կատարելով սեփական երկու պիեսներ, որոնցով սկսեց համերգի երկրորդ բաժինը:*

Համերգին ներկա էին մեծ թվով հայեր. նրանք չեն հանդարտվում, մինչև որ Նալբանդյանն առանց նվագակցության կատարում է «Հայերի արցունքները» վերնագրով մեղեդին: «Այս լայնաշունչ մեղեդին խորապես թախծոտ է, խիստ ընորոշ և չափազանց հմայիչ անհուն տխրության իր արտահայտությամբ: Ամեն ոք, ով հետևում է իրադարձությունների ընթացքին, գիտե, թե ինչ սարսափելի պահեր են ապրում այժմ Թուրքիայի հայերը և ինչ ահավոր չքավորության մեջ են այնտեղից մազապուրծ փախածները: Այս մեղեդին, որը նվագեց պ. Նալբանդյանը, խորապես սրտագին՝ իր մաքուր ժողովրդական ոճով, առաջ բերեց հավանության միահամուռ պայթյուն, որում զգացվում էր ինչ-որ ցավագին խանդավառություն: Յուրաքանչյուր հայ, ըստ երևույթին, հիշում էր իր եղբայրներին, և հրաշալի նվագված մեղեդին է՛լ ավելի էր բորբոքում նրա հոգու վերքը»[60]*:*

«Անվերջ bis-*երից յետոյ, պ. Նալբանդեանը նուագեց «Կռունկ»-ը, որն ընդունուեց մեծ ոգևորութեամբ: Չենք կարող չարձանագրել այն փաստը, որ պ. Նալբանդեանը ձրի բաժանեց մօտ 50 տոմսակ հայ ուսանողներին, հասուցանելով այդպիսով նրանց մեծ բավականութիւն»*[61]*:*

Նկատենք, որ Նալբանդյանը բազմիցս մասնակցել է բարեգործական համերգների: Փետրվարի 28-ին գերմանական եկեղեցում կարիքավոր հայերի օգտին կազմակերպված հոգևոր համերգի ժամանակ Նալբանդյանը, հայ ժողովրդի դժբախտ վիճակի մասին մտքերով տարված, Ալեսանդրո Ստրադելլայի «Արիան» մենակատար ջութակի համար նվագում է այնպես, ասես «... ջութակահարը տառացիորեն ողբաց Ստրադելլայի «Արիան»»[62]*:*

Տարիներ կանցնեն, և արձագանքելով Հայոց մեծ եղեռնի ողբերգական իրադարձություններին, 1916 թ. հունվարի 18-ին Պետերբուրգի կոնսերվատորիայի փոքր դահլիճում տեղի ունեցած իր համերգի ողջ հասույթը ջութակահարը կտրամադրի հայ փախստականներին: «Պատերազմին մասնակցած հայ չքավոր ընտանիքներին օգնության Ընկերությանը և ռազմական գործողություններից տուժած և աղքատության մեջ գտնվող հայ ազգաբնակչությանը» կուղղվի 1916 թ. նոյեմբերի 22-ին կոնսերվատորիայի փոքր դահլիճում Նալբանդյանի համերգի ողջ հասույթը ևս[63]*...*

... Երբ սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, ճիշտ երկու ամիս անց՝ 1941 թ. օգոստոսի 22-ի գիշերը, Լենինգրադի կոնսերվատորիայի կոլեկտիվը էվա-

---

[59] *Տե՛ս ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 143:*

[60] «Биржевые ведомости», 02. II. 1897.

[61] *«Արձագանք», 09. II. 1897:*

[62] «Русь» (СПб.), 02. III. 1897.

[63] *Տե՛ս ԳԱԹ, Հովհ. Նալբանդյանի ֆ., № 305:*

կուացվեց Տաշքենդ: Այստեղ էլ 1942 թ. փետրվարի 23-ի երեկոյան հարազատների, աշակերտների և ընկերների համար անսպասելի հանկարծամահ եղավ Հովհ. Նալբանդյանը 70 տարեկան հասակում: Ի՞նչն էր պատճառը՝ մնաց անհայտ: Միգուցե իր սիրելի Լենինգրադի համար մշտական տագնապը, անհանգստություններն ու ապրումները պատերազմի արհավիրքների դեմ մաքառող լենինգրադցիների համար: Կամ էլ՝ հիասթափությունը ֆաշիստական Գերմանիայից. չէ՞ որ տաղանդավոր ջութակահարի նվագացանկի անբաժան մասն էին գերմանացի կոմպոզիտորների՝ Բախի, Բեթհովենի, Հենդելի, Շուբերտի, Շումանի, Մենդելսոնի, Բրամսի, Մաքս Ռեգերի, Մաքս Բրուխի, Լյուդվիգ Շպորի, Յոզեֆ Ռաֆֆի ստեղծագործությունները, ինչպես նաև՝ Մոցարտի և Ռամոյի գործերի՝ գերմանացի ջութակահար Վիլլի Բուրմեստերի տրանսկրիպցիաները: Չէ՞ որ նրա կատարողական արվեստի մի շատ կարևոր էջը հենց 1911-ի և 1914-ի համերգային երկու շրջագայություններն էին Գերմանիայում, որի ընթացքում փայլուն ելույթներ ունեցավ Բեռլինում, Լայպցիգում, Դրեզդենում, Քյոլնում, Մայնի Ֆրանկֆուրտում, Դյուսելդորֆում, Բոննում, Կոբլենցում և այլ քաղաքներում: Փայլուն ելույթներ, որոնց ջերմ գրախոսականներով արձագանքեց գերմանական մամուլը, համերգներ, որոնց ականատեսն էր գերմանացի ունկնդիրը: Չէ՞ որ հենց Բեռլինն էր այն քաղաքը, որտեղ տեղի ունեցավ նրա ճակատագրական հանդիպումն աշխարհահռչակ ջութակահար Յոզեֆ Յոախիմի հետ: Չէ՞ որ հիշողությունից չէին կարող ջնջվել XX դարասկզբի իր կիևյան համերգները՝ գերմանացի դիրիժոր Ռուդոլֆ Բուլլերիանի ղեկավարությամբ ...

Ինչ իմանար Հովհ. Նալբանդյանը, որ ֆաշիստներն այրելու են Պավլովսկի կայարանի համերգային դահլիճը, որտեղ 1894-ի հունիսին՝ Պետերբուրգի կոնսերվատորիան ավարտելուց անմիջապես հետո, տեղի էր ունեցել իր դեբյուտը, և սիմֆոնիկ նվագախմբի հետ առաջին իսկ ելույթից հետո երկու ամիսների ընթացքում հաջողությունը հավատարմորեն ուղեկցել էր իրեն ... Ու դժվար, շատ դժվար էր համակերպվել այն մտքի հետ, որ գերմանացիներն այժմ ավերում ու ոչնչացնում են իր շատ սիրելի Լենինգրադը:

Այդպես էլ հեռացավ կյանքից Նալբանդյանը՝ չտեսնելով ազատագրված Լենինգրադը:

Եվ պատահական չէ, որ ջութակահարի մահից 20 տարի անց՝ 1962-ին, Երևանում լույս տեսած Գուրգեն Գևորգյանի «Հովհաննես Նալբանդյան. կենսագրական ակնարկ» գրքույկը նվիրվեց հենց «Լենինգրադի կոնսերվատորիայի հիմնադրման 100-ամյակին»[64]*:*

Եզրակացություն

Տաղանդավոր ջութակահար և հմուտ մանկավարժ Հովհ. Նալբանդյանի գործունեությունը XIX դարավերջին և XX դարասկզբին ընթացավ երկու ճանապարհով՝ մանկավարժական և կատարողական՝ երկուսում էլ արձանագրելով ակնառու նվաճումներ:

Նալբանդյանի մանկավարժական գործունեության շնորհիվ կապ ստեղծվեց ջութակի կատարողական աուերյան և սովետական դպրոցների միջև: Նալ-

---

[64] *Գևորգյան. 1962, 1:*

բանդյանը, իր սանների վկայությամբ, բարյացակամ, զգայուն և ուշադիր ուսուցիչ էր: Լինելով Առերի վաղ շրջանի սաներից մեկը՝ նա ուսանողների մեջ ձևավորում էր անհատականություն՝ իր ուշադրությունը սևեռելով նրանց անհատական որակների և ընդունակությունների վրա[65]*: Տասնամյակների ընթացքում նա կրթեց մենակատար ջութակահարների, անսամբլիստների, նվագախմբային արտիստների և մանկավարժների մի քանի սերունդներ:*

Մեծանուն ջութակահարի ստեղծագործական կյանքի կարևոր բաղադրիչն էր կատարողական գործունեությունը: Ժամանակակից ջութակահարներից քչերը կարող էին Նալբանդյանին հավասարվել համերգային ինտենսիվ գործունեության ասպարեզում: Ժամանակակիցների վկայությամբ՝ նա այն վիրտուոզներից էր, ում ազգանվանն ամեն շաբաթ կարելի էր հանդիպել համերգային հայտագրերի վրա: Երաժշտասերները նրան շատ լավ ճանաչում էին ինչպես Պետերբուրգում, այնպես էլ Կիևում, Վիլնոյում, Ռիգայում, Բեռլինում, Քյոլնում, Դյուսելդորֆում, Բոննում, Կոբլանցում, Մայնի Ֆրանկֆուրտում, Թիֆլիսում, Բաքվում, Երևանում և այլուր:

Հովհ. Նալբանդյանն իր մշտական ունկնդիրը, իր ուրույն լսարանն ունեցող եզակի արտիստներից էր: Նրա համերգներին գնում էին հենց իրեն ունկնդրելու և ոչ թե նրա կատարմամբ տվյալ ստեղծագործությունները լսելու նպատակով: Վիրտուոզ ստեղծագործությունների կողքին ջութակահարը միշտ նվագում էր կամերային գործեր, ջութակի գրականության նորույթներ. նա մրցակիցներ չուներ ջութակի գրականության նորությունների ներկայացման ասպարեզում ևս:

Մեծ ջութակահարի նվագն առանձնանում էր տոնի հրաշալի գեղեցկությամբ, վստահ և ճկուն տեխնիկայով, կատարման փայլով ու բազմազան տեխնիկայով, ցայտուն ֆրազավորմամբ: Ընդ որում՝ աջ ու ձախ ձեռքերի տեխնիկան նրա մոտ զարգացած էր հավասարապես: Ու թեև նա միշտ հաղթահարում էր տեխնիկական դժվարությունները, այնուամենայնիվ, նրա նվագն ունկնդրին գրավում էր ոչ այնքան վիրտուոզությամբ, որքան՝ կանտիլենայով. իսկական արտիստ էր և ոչ թե՝ լոկ վիրտուոզ:

Նալբանդյանի՝ դասական ստեղծագործությունների լավագույն մեկնաբաններից մեկի, նվագացանկում էին Բախի d-moll *կոնցերտը երկու ջութակի համար, Բախի №2 կոնցերտը, Մոցարտի Ջութակի և նվագախմբի* № 6 Es-dur *կոնցերտը, Մենդելսոնի, Պ. Չայկովսկու (ի դեպ՝ Չայկովսկու կոնցերտը կոնսերվատորիայի պատերի ներսում առաջինը ինքն է նվագել), Ա. Գլազունովի ջութակի կոնցերտները, Վիյոտանի ջութակի № 2, № 4 և № 5 կոնցերտները, Շպորի ջութակի 8-րդ կոնցերտը, Բրուխի 2-րդ կոնցերտը, Իվանովի կոնցերտը, Ա. Ռուբինշտեյնի ջութակի սոլ մաժոր կոնցերտը, Պագանինիի* D-dur *Կոնցերտը, Յու. Կոնյուսի* e-moll *կոնցերտը … Մի առանձին սիրով է Նալբանդյանը կատարել Սարասատեի, Յոախիմի և Վենյավսկու ստեղծագործությունները: Մյուս կողմից՝ Նալբանդյանը, տուրք չտալով ունկնդրի ճաշակին, հաճախ էր նվագում այս կամ այն սուբյեկտիվ պատճառներով սակավ հնչող ստեղծագործությունները, այդ թվում՝ Բրամսի Սոնատը դաշնամուրի ու ջութակի համար, Շումանի լյա մինոր Սոնատը և այլն:*

[65] *Տե՛ս* Н а л б а н д я н. 2015, 72.

Հովհ. Նալբանդյանը կատարում և անդուլ պրոպագանդում էր ռուս, արևմտաեվրոպական և հայ կոմպոզիտորների ստեղծագործությունները: Նրա նվագացանկում կարևոր տեղ էր գրավում ժամանակակից երաժշտությունը: Մենակատար ջութակահարը հաջողությամբ հանդես է եկել նաև անսամբլային և կվարտետային երաժշտության կատարմամբ:

Հատուկ Նալբանդյանի համար են գրվել ու նրան նվիրվել Վիտալի «Լատիչական ֆանտազիան», Ս. Լյապունովի Ջութակի և նվագախմբի կոնցերտը, Լ. Նիկոլաևի Սոնատը ջութակի և դաշնամուրի համար, Ա. Սպենդիարյանի Ջութակի և դաշնամուրի ռոմանսը, «Կանցոնետը», ժամանակակից կոմպոզիտոր Պոգոժևի «Նոկտյուրնը», որոնց առաջին կատարողը հենց ինքն էր:

Անվանի ջութակահարը հանդես է եկել նաև որպես հմուտ անսամբլիստ և պրոպագանդել կվարտետային երաժշտությունը:

Հարազատ մնալով աշխարհահռչակ ջութակահար-վիրտուոզների ավանդույթներին՝ Նալբանդյանը ևս ստեղծագործում էր ու ջութակի համար գրած պիեսներով հանդես գալիս իր համերգների ընթացքում: Ցավոք, այսօր մեզ համար այդ ստեղծագործությունները մատչելի չեն. նոտաները չկան Հովհաննես Նալբանդյանի ԳԱԹ-ի արխիվում և դրանց մասին կարող ենք պատկերացում կազմել միայն ժամանակի մամուլի արձագանքներով: Նրա գործերից մեծ հաջողություն են ունեցել G-dur *Ռոմանսը,* A-dur *Էտյուդը, «Արևելյան կապրիսը»,* «Le Tourment»-*ը,* G-dur *Պրելյուդը,* G-dur *Էտյուդը, «Հեքիաթը» մենակատար ջութակի համար, «Քայլերգը», «Նոկտյուրնը», «Ֆանտազիան»,* «Mlancolic»-*ը,* «Orinetale»-*ը:*

Իր ողջ կյանքն ապրելով Ռուսաստանում և համարվելով Ռուսաստանի լավագույն ջութակահարներից մեկը՝ Հովհ. Նալբանդյանը հավատարիմ էր իր հայկական արմատներին:

Հավելենք. համաշխարհային բեմահարթակ բարձրացած հայ առաջին խոշոր ջութակահար Հովհաննես Նալբանդյանի հանդեպ մեծ հետաքրքրություն կա աշխարհում՝ մասնավորապես Ռուսաստանում ու Գերմանիայում: Միևնույն ժամանակ՝ ցավով նշենք, որ՝

1. այսօրվա մեր սերնդին անծանոթ է ղրիմահայ երաժշտության այդ լեգենդար ներկայացուցիչը, նրա արվեստը,

2. Սիմֆերոպոլում ծնված, Պետերբուրգում ապրած և իր մանկավարժական ու կատարողական արգասաբեր գործունեությունը ծավալած, աշխարհի տարբեր երկրներում համերգներով հանդես եկած ու իր արվեստով միշտ հարազատ ժողովրդին ծառայած հայորդու գերեզմանը գտնվում է հեռավոր Տաշքենդում: Եվ այսօր՝ նրա մահից 80 տարի անց, հարց է, կան, արդյո՞ք, նրա շիրմին այցելողներ ու ծաղիկներ դնողներ, նրան ու նրա արվեստը հիշողներ …

Աննա Ասատրյան – արվ. դ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, երաժշտության բաժնի վարիչ, գլխավոր գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ նոր և նորագույն շրջանի հայ երաժշտության ուսումնասիրություն: Հեղինակ է 11 մենագրության և շուրջ 210 հոդվածի: annaasatryan2023@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ասատրյան Ա. 2015, Պետերբուրգի կոնսերվատորիայի հայ սանը և պրոֆեսորը. Հովհաննես Նալբանդյան. – Աղասյան Ա., Ասատրյան Ա. Հայ-ռուսական գեղարվեստական առնչությունների պատմությունից. Սանկտ Պետերբուրգ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 93–205:

Ասատրյան Ա. 2019, Հովհաննես Նալբանդյանի հուշերը Պաբլո Սարասատեի մասին.– «Արվեստագիտական հանդես», № 1, էջ 188–206:

«Արձագանք» (Թիֆլիս), 02. VI. 1893, 09. II. 1897:

Գևորգյան Գ. 1962, Հովհաննես Նալբանդյան. կենսագրական ակնարկ, Երևան, Հայպետհրատ, 135 էջ:

ՀՀ գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Հովհ. Նալբանդյանի ֆ., № 1 (դ), (1913, 1932, 39, 40), ընդ. 14 թ., № 1 (ա), 1913 թ., 21 թ. (ինքն.), մեք. 17 թ., № 2; № 13–79, № 143, № 305, № 348, № 350:

«Նոր-դար» (Թիֆլիս), 10. VI. 1893:

Սպենդիարովա Մ. 1966, Սպենդիարով, Երևան, «Հայաստան», 231 էջ:

«Տարազ» (Թիֆլիս), 25. IV. 1893, 06. VI. 1893, 20. VI. 1893:

Асатрян А. Г. 2021, Воспоминания Иоанесса Романовича Налбандяна о Йозефе Иоахиме. – «Искусствоведческий журнал», № 1, с. 201–219.

«Биржевые ведомости» (СПб.), 06. I. 1897; 02. II. 1897.

«Каспий» (Баку), 04.VI. 1893.

Налбандян С. 2015, Памяти Иоанесса Романовича Налбандяна. К 70-летию победы. –Альманах «Малоизвестные страницы истории консерватории» (СПб.), вып. XV, с. 69–73.

«Новости» (СПб.), 29. IV. 1894.

«Новое обозрение» (Тифлис), 29. V. 1893.

«Новое время» (СПб.), 01. V. 1894; 22. VIII. 1894

«Петербургская газета» (СПб.), 29. IV. 1894; 21. VIII. 1894; 05. I.1897.

«Петербургский листок» (СПб.), 03. VII. 1894; 06. I. 1897.

«Русь» (М.), 02. III. 1897.

«Сын отечества» (СПб.), 24. VI. 1894.

ИОАННЕС НАЛБАНДЯН: ПЕРВЫЙ КРУПНЫЙ АРМЯНСКИЙ СКРИПАЧ

АННА АСАТРЯН

Резюме

Ключевые слова: Иоаннес Налбандян, артист, скрипач-виртуоз, педагог, Петербургская консерватория, мемуары, П. Сарасате, Л. Ауэр.

Выдающийся скрипач и педагог, Заслуженный артист РСФСР (1926), Заслуженный деятель искусств РСФСР (1937) Иоаннес Романович Налбандян (Ованес Аракелович, 1871–1942) – ярчайший символ армяно-русских музыкальных связей. Родившись в Симферополе (Крым), он долгие годы жил и творил в Петербурге. Северная столица России стала для него второй родиной. Выпускник Петербургской консерватории, профессор И. Р. Налбандян 47 лет преподавал в Петербургской, а затем – в Ленинградской консерватории. Через Налбандяна осуществилась связь ауэровской скрипичной школы с советским скрипичным искусством.

Осенью 1890 г. он впервые выступил на армянском студенческом вечере. Именно тогда товарищи-студенты убедили его переменить окончание фамилии «ов» на «ян», чтобы все знали, что он армянин. Директор Петербургской консерватории А. Рубинштейн одобрил это намерение и велел переделать все бумаги.

С 1897 года Налбандян давал ежегодные концерты в Петербурге, принимая активное участие в музыкальной жизни города. Он был одним из лучших интерпретаторов классической скрипичной музыки (Концерт для двух скрипок d-moll Баха, Концерт № 2 Баха, Концерт для скрипки и оркестра № 6 Es-dur Моцарта, Скрипичный концерт Мендельсона, Концерты № 2, 4, и 5 Вьетана, Восьмой скрипичный концерт Шпора, Второй концерт Бруха, D-dur-ный концерт Паганини, произведения Бетховена, Генделя, Шуберта, Шумана, Регера, Раффа, Моцарта, Рамо и т. д). С особой любовью скрипач исполнял произведения Сарасате, Иоахима и Венявского. С другой стороны, Налбандян охотно обращался к мало звучавшим произведениям (Соната для фортепиано и скрипки Брамса, Соната ля минор Шумана и т. д.).

И. Налбандян пропагандировал русскую классическую и современную музыку [Скрипичный концерт Чайковского, Скрипичный концерт Глазунова, Скрипичный концерт (Соль мажор) А. Рубинштейна, e-moll-ный концерт Ю. Конюса и т. д.] как в Петербурге, так и в Тифлисе, Баку, Ереване, Киеве, Вильно, Риге, Берлине, Лейпциге, Дрездене, Кельне, Франкфурте-на-Майне, Дюссельдорфе, Бонне …

Специально для Налбандяна были написаны и ему были посвящены Концерт для скрипки и оркестра С. Ляпунова, «Латышская фантазия» Я. Витоля, Соната для скрипки и фортепиано Л. Николаева, Романс для скрипки и фортепиано Ал. Спендиаряна и другие произведения, которые впервые исполнял именно он.

Следуя традициям виртуозов-скрипачей, И. Налбандян сам сочинял музыку и исполнял на своих концертах. Среди его пьес особой популярностью пользовались Романс G-dur, Этюд A-dur, «Сказка» для соло-скрипки, Ноктюрн, Фантазия, «Le Tourment», «Melancolic», «Orientale» и т. д.

В течение всей своей жизни И. Налбандян был верен своим армянским корням.

Анна Асатрян – д. иск., проф., РА, временно исполняющая обязанности директора Института искусств НАН РА, заведующая отделом музыки, главный научный сотрудник. Научные интересы: исследование армянской музыки нового и новейшего времени. Автор 11 монографий и около 210 статей. annaasatryan2023@mail.ru

HOVHANNES NALBANDYAN: THE FIRST GREAT ARMENIAN VIOLINIST

ANNA ASATRYAN

S u m m a r y

Key words: Hovhannes Nalbandyan, artist, virtuoso violinist, pedagogue, St. Petersburg Conservatory, memoirs, P. Sarasate, L. Auer.

Outstanding violinist and pedagogue, Honored Artist of the RSFSR (1926), Honored Art Worker of the RSFSR (1937) Hovhannes Romanovich Nalbandyan (Hovhannes Arakelovich, 1871–1942) is the brightest symbol of Armenian-Russian musical ties. Born in Simferopol (Crimea), he lived and acted in St. Petersburg for many years. The northern capital of Russia became his second homeland. A graduate of the St. Petersburg Conservatory, Professor H. R. Nalbandyan taught for 47 years at the St. Petersburg Conservatory, and then at the Leningrad Conservatory. Through Nalbandyan, the connection between the Auer violin school and the Soviet violin art was realized.

In the fall of 1890, he made his first appearance at an Armenian student evening. It was then that fellow students convinced him to change the ending of his surname “ov” to “yan” so that everyone would know that he was an Armenian. Director of the St. Petersburg Conservatory A. Rubinstein approved this intention and ordered all the papers to be redone.

Since 1897, Nalbandyan gave annual concerts in St. Petersburg, taking an active part in the musical life of the city. He was one of the best interpreters of classical violin music (“Bach’s Concerto for Two Violins in d-moll”, Bach’s Concerto No. 2, Mozart’s Violin Concerto No. 6 Es-dur, Mendelssohn’s Violin Concerto, Concertos Nos. 2, 4, and 5 Vietana, Spohr’s Eighth Violin Concerto, Bruch’s Second Concerto, Paganini’s D-dur concerto, compositions of Beethoven, Handel, Schubert, Schumann, Reger, Raff, Mozart, Rameau, etc.). With special love, the violinist performed compositions of Sarasate, Joachim and Wieniawski. On the other hand, Nalbandyan willingly took to compositions that were less played (Brahms’ Sonata for Piano and Violin, Schumann’s Sonata in A Minor, etc.).

H. Nalbandyan propagandized Russian classical and modern music [Tchaikovsky’s Violin Concerto, Glazunov’s Violin Concerto, A. Rubinstein’s Violin Concerto (G Major), Y. Konyus’ E-moll Concerto, etc.] both in St.

Պատմաբանասիրական հանդես 2022 № 1 Историко-филологический журнал

Petersburg and Tiflis, Baku, Yerevan, Kyiv, Vilna, Riga, Berlin, Leipzig, Dresden, Cologne, Frankfurt am Main, Dusseldorf, Bonn...

The Concerto for violin and orchestra by S. Lyapunov, “Latvian Fantasy” by J. Vitol, Sonata for violin and piano by L. Nikolaev, Romance for violin and piano by Al. Spendiaryan and other compositions were especially written for Nalbandyan and dedicated to him which were first performed by the latter.

Following the traditions of violin virtuosos, H. Nalbandyan himself composed music and performed at his concerts. Among his pieces, Romance in G-dur, Etude in A-dur, “The Fairy Tale” for solo violin, Nocturne, Fantasia, “Le Tourment”, “Melancolic”, “Orientale”, etc., were especially popular. Throughout his life H. Nalbandyan was true to his Armenian roots.

Anna Asatryan – Doctor of Arts, Prof., Acting Director of the NAS RA Institute of Arts, Head of the Music Department, Chief Researcher. Scientific interests: the study of Armenian music of the new and modern times. Author of 11 monographs and about 210 articles. annaasatryan2023@mail.ru